# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## 2023 թվականի մայիսի 20-ից 26-ը
## Եգիպտոս (ք. Կահիրե) գործուղման արդյունքների մասին

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

**1)** Գրիգորի Դավթյան, ՀՀ ՊԵԿ միջազգային համագործակցության վարչության հարկային համագործակցության բաժնի պետ

**2. Գործուղման վայրը և ժամկետները՝**

Եգիպտոս, ք.Կահիրե, 2023թ. մայիսի 20-ից 26-ը

**3. Հրավիրող կողմը՝**

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի (այսուհետ՝ Գլոբալ ֆորում) քարտուղարություն,
- Եգիպտոսի Արաբական Հանրապետության ֆինանսների նախարարություն

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Միջոցառմանը մասնակցության հիմնական նպատակն է ապահովել ՏՀԶԿ Գլոբալ ֆորումին ՀՀ մասնակցության հետ կապված ՀՀ միջազգային պարտավորությունները, այդ թվում՝ ՀՀ մասնակցությունը ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի Փորձագիտական ստուգման խմբի կողմից անցկացվող փորձագիտական գնահատումներին:

Մասնավորապես, սույն գործուղման ընթացքում՝ Եգիպտոսի փորձագիտական գնահատման նպատակով ձևավորված գնահատողների միջազգային թիմի կազմում (որին ներգրավված է նաև ՀՀ ներկայացուցիչը) գնահատվել է հարկային գործերով հարցման հիման վրա տեղեկությունների փոխանակման Եգիպտոսի կարգավորումների և պրակտիկայի համապատասխանությունը ՏՀԶԿ համապատասխան ստանդարտին:

**5. Քննարկված թեմաները՝**

Այցի ընթացքում, Եգիպտոսի փորձագիտական գնահատման նպատակով ձևավորված գնահատողների միջազգային թիմը կատարել է հարկային գործերով հարցումների հիման տեղեկությունների փոխանակման Եգիպտոսի օրենսդրական կարգավորումների և պրակտիկայի ուսումնասիրությունը և գնահատումը՝ ՏՀՋԿ ստանդարտի պահանջներին համապատասխանության տեսանկյունից: Գնահատումն իրականացվել է փոխանակման ենթակա տեղեկությունների առկայության, հասանելիության և պրակտիկ փոխանակման 10 տարրերով՝ ըստ ՏՀՋԿ-ի համապատասխան ձեռնարկի: Ուսումնասիրության ընթացքում միջազգային թիմն արձանագրել է, որ եգիպտական կողմը 10 տարրերից 7 տարրով ունի «մեծապես համապատասխան» կամ «համապատասխան», առնվազն 2 տարրով՝ «մասնակի համապատասխան», 1 տարրով «ոչ համապատասխան» գնահատական: Վերջինիս պարագայում երկրի ընդհանուր ակնկալվող գնահատականը չի կարող լինել ավել, քան «մասնակի համապատասխան»:

Ուսումնասիրության արդյունքներով եգիպտական կողմին տրվել են ցուցումներ թերի ներկայացված տեղեկատվության լրացման մասով, ինչպես նաև ներկայացվել են բարելավման ուղղությամբ փորձագիտական առաջարկություններ:

Այցի ընթացքում միջազգային թիմը մանրամասն քննարկումներ է վարել Եգիպտոսի ֆինանսների նախարարության և հարկային մարմնի, արտաքին գործերի նախարարության, արդարադատության նախարարության, ներքին առևտրի և մատակարարումների նախարարության, կենտրոնական բանկի, առևտրային ռեգիստրի, ներդրումների գլխավոր մարմնի, ֆինանսական կարգավորման մարմնի, ինչպես նաև եգիպտական բանկերի, փաստաբանների միության, հաշվապահների միության և մի շարք այլ հաստատությունների ներկայացուցիչների հետ: Ստացվել են պարզաբանումներ համապատասխան ոլորտների կարգավորումների և դրանց գծով տեղեկությունների փոխանակման պրակտիկայի վերաբերյալ՝ ըստ ՏՀՋԿ հարցաշարի: Կատարվել է այց Եգիպտոսի հարկային մարմնի տեղեկությունների փոխանակման իրավասու ստորաբաժանման տարածք՝ տեղում աշխատանքների կազմակերպմանն ու ընթացքին ծանոթանալու նպատակով:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Այցի ընթացքում Եգիպտոսի փորձագիտական գնահատման նպատակով ձևավորված գնահատողների միջազգային թիմին ընդունել են Եգիպտոսի հարկային մարմնի ղեկավարի տեղակալը, Ներդրումների և ազատ գոտիների գլխավոր մարմնի փոխնախագահը:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել, գրավոր որոշումներ չեն ընդունվել: Այցի արդյունքներով եզրափակիչ հաշվետվությունը նախատեսվում է ամփոփել, համաձայնեցնել և ներկայացնել ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի Փորձագիտական ստուգման խմբի ուշադրությանը՝ «տարանձատող պահից» (cut off date) հետո: Մինչ այդմ եգիպտական կողմը պարտավորվել է լրացնել թերի ներկայացրած հիմնավորումները ու փաստաթղթերը, հայտնել ունեցած դիտողություններն ու առարկությունները:

Այցի ընթացքում բարձրացվել է 06.12.2005թ. ՀՀ և ԵԱՀ միջև ստորագրված կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագիրը եգիպտական կողմից չվավերացնելու պատճառների մասին հարցը, որին չի ստացվել հստակ պատասխան: Միաժամանակ պարզվել է, որ եգիպտական կողմը 2004-2006թթ.-ին ստորագրել էր նմանօրինակ համաձայնագրեր տարբեր երկրների հետ, որոնք չեն ստացել հետագա ընթացք, ինչը նախատեսվում է արտացոլվել է նաև եզրափակիչ հաշվետվությունում, քանի որ նշանակելի է C.2 տարրի գնահատականի առումով:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Այցի ընթացքում հաստատվել է տեղեկությունների փոխանակման դրական պրակտիկայի կարևորությունը գնահատվող երկրներին տրվող ընդհանուր գնահատականի համար: Մասնավորապես, մտից հարցումներին 90-օրում չպատասխանելը կամ կատարման ընթացքի մասին հայցող մարմնին չծանուցելը, ինչպես նաև ընդհանուր առմամբ 180 օրում հարցումներին շարունակական չպատասխանելը, հանգեցնում են C.5 տարրի բացասական (“չհամապատասխան”) գնահատականի, որն իր հերթին առաջացնում է երկրի ընդհանուր բացասական գնահատական (ոչ ավել քան «մասնակի համապատասխան»): Վերջինս հիմք է հանդիսանում գնահատվող երկիրը ՏՀԶԿ-ի «սև ցուցակում» ընդգրկելու և տնտեսական

սանկցիաների ենթակելու համար (օր.՝ վարկավորման սահմանափակում ԵՄ-ի և ՏՀԶԿ-ին անդամակցող մի շարք այլ դերակատարների կողմից): Հաշվի առնելով, որ Հայաստանը ներկայիս պահին նույնպես անցնում է ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի փորձագիտական գնահատում, առաջարկվում է բարձր կարևորություն հաղորդել ՀՀ ՊԵԿ-ում մտից հարցումների կատարման աշխատանքներին՝ վերացնելով տարբեր փուլերում տեղի ունեցող անհարկի ձգձգումները, առաջնահերթություն տալ հարցումների հետ կապված նամակագրության ընթացքին, բարելավել իրավասու ստորաբաժանման հագեցվածությունը անհրաժեշտ տեխնիկայով (շրեդերով):

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

Գրիգորի Դավթյան

29.05.2023թ.